



ԱՐՇԱԼՈՅ
ԹՕՓԱԼԵԱՆ
(1944-2024)

Դուկտ. Արշալոյս Թօփալեան ծնած է Դամասկոս, 1944ին: 1969ին աւարտած է Երեւանի պետական համալսարանի պատմութեան ֆակուլտետը, մագիստրականի վկայականով: 1970-84 իբրեւ գիտաշխատող պաշտօնավարած է ԳԱ Արեւելագիտութեան ինստիտուտին մէջ, իսկ 1974-77՝ դասախօսած ԵՊՀի մէջ: 1983ին թեկնածուա-

կանատենախօսութիւն պաշտպանած է Հայաստանի ԳԱ Արեւելագիտութեան ինստիտուտին մէջ, ընդդիմախօս ունենալով Եւկենի Փրիմաքովը:

Դուկտ. Թօփալեան մասնակցած է հայ ժողովուրդի պատմութեան նուիրուած գիտաժողովներու: Իր ուսումնասիրութիւնները հրատարակուած են Արեւելագիտութեան ինստիտուտի *Արաբական երկրներ* հատորաշարքին, ինչպէս նաեւ *Հայկազեան հայագիտական հանդէսին* մէջ:

1985-86 կրթաշրջանին միացած է Հայկազեան համալսարանի (այն ատեն գոլէճ) դասախօսական կազմին: Այնուհետեւ, մինչեւ 2021 դասաւանդած է Հայ ժողովուրդի պատմութիւն, Քննական տեսութիւն հայ ժողովուրդի պատմութեան (590-875), Քննական տեսութիւն հայկական Կիլիկիոյ պատմութեան (1071-1375), Քննական տեսութիւն հայ ժողովուրդի պատմութեան (1441-1914), Հայ գաղթականութեան եւ հայկական գաղութներու պատմութիւն, Առաջին աշխարհամարտը, արեւմտահայութիւնը եւ Մեծ Եղեռնը, Հայ գրականութիւն, Հայ պատմագրութեան պատմութիւն, Հայկական Հարցի հոլովոյթը ԺԹ. դարակէսէն մինչեւ Լոզան, Հայ մշակոյթի պատմութիւն, Արաբական գրականութիւն, Արաբական երկիրներու պատմութիւն դասանիւթերը:

1991ին մաս կազմած է Հայկազեան հայագիտական հանդէսի խմբագրակազմին, որուն յառաջադրանքն էր վերսկսիլ հրատարակութիւնը Հանդէսին: Այդ հանգամանքով, դոկտ. Թօփալեան մնաց գործուն անդամ խմբագրակազմին, մինչեւ իր մահը՝ 3 Հոկտեմբեր 2024:

Դոկտ. Թօփալեան Հայկազեանի երկարամեայ դասախօսներէն մին էր, հայոց պատմութեան նուիրեալ մասնագէտ: Թէեւ իր դասանիւթերուն ուսանողներուն մեծամասնութիւնը իբրեւ մասնագիտութիւն հայագիտութիւնը ընտրած չէր ըլլար, սակայն իր բժախնդիր մօտեցումով, ուսանողութեան հանդէպ իր ջերմ եւ գուրգուրոտ վերաբերմունքով, գիտելիք փոխանցելու իր անսպառ ջանքով, իր շահեկան, օգտաշատ բացատրութիւններով ու վերլուծութիւններով գիտէր թէ՛ դասաւանդութեան մակարդակը պահելու եւ թէ՛ ոչ-մասնագէտ ուսանողներուն իր նիւթը սիրցնելու եղանակը:

Հայկազեան հայագիտական հանդէսի խմբագրութեանս համար պատիւ էր գործակցիլ ազնուութեամբ, մարդասիրութեամբ յատկանշուող, հայութեամբ եւ հայագիտութեամբ կենսաւորուող դոկտ. Թօփալեանի հետ: Ան մնաց միշտ համեստ, երէցին ու կրտսերին հետ հաւասարաչափ յարգալից, միշտ հետամուտ՝ քննական մօտեցումի, գիտական ճշգրտութեան ու ընդհանրապէս ճշմարտութեան: Խմբագրակազմի քննարկումներուն դոկտ. Թօփալեան առարկայական, հանդարտաբարոյ, բժախնդիր ու սկզբունքային կեցուածք կը ցուցաբերէր, միշտ ալ ընդունելով այլոց համոզիչ տեսակէտերը:

Դոկտ. Արշալոյս Թօփալեանի մահով Հայկազեան հայագիտական հանդէսը կը կորսնցնէ տոկուն գիտնական-հայագէտ մը, տիպար գործընկեր մը եւ անկեղծ ու սիրելի գործակից մը: